կաց՝ տուեալ յաւուրց անտի Արքային Սէլիմայ՝ մինչեւ ցաւուրս մեր, Հայք՝ զոր ինչ միանգամ ժառանգութեամբ ունին 'ի դաւառին յայնմիկ, եկեղեցիք, վանօրայք, կալուածք եւ ստացուածք, այգիք, պարտէզք եւ ամենայն սեփհականութիւնք. արծաթեղէնք և պղնձեղէնք, և ամենայն սպասք եկեղեցւոյ, 'ի վերայ ամենեցուն սոցա Եղիազար վարդապետ լիցի իշխան և վերատեսուչ, և անմիջական փոխանորդ Աստուածատուր Պատրիարքի, և յայսմհետէ յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց՝ և կամ ով ոք և իցէ յազգէն Հայոց, թէեւ ունիցի 'ի ձեռս իւր հրովարտակ Արքունի՝ մի' իշխեսցէ գնալ յԵրուսաղէմ, եւ ձեռն մխել 'ի գործս Եղիազարու. զի Հայք միաբանութեամբ խնդրեցին հաստատել զայս հրովարտակաւ, եւ բառնալ զամենայն խոչն, ՌՈՂ (1660).

ԳԼՈՒԽ ԽԷ.

Գործ Եղիազար վարդապետի. Նստիլ Նոյա առանձին Կաթուղիկոս յԵրուսաղէմ։ Նուիրակունք Էջմիածնի։ Գժտութիւն Աստուածատուր Պատրիարքի և Մարտիրոս վարդապետի ընդ Եղիազարու։

ՀԱՍՏԱՏԵԱԼ Եղիազարու զիշխանութիւն փոխանորդութեան և գործակալութեան (Նազր) Աստուածատուր Պատրիարքի, եդ 'ի մտի այնուհետեւ լինիլ գլուխ ազգին Հայոց և նստիլ առանձին Կաթուղիկոս 'ի վերայ Հայոց եղելոց ընդ իշխանութեամբ Օսմանցւոց և դնել զաթոռ իւր յԵրուսաղէմ, զի լեալ էր ծանօթ երկրին։ Այսպիսի խորհրդով ձեռնարկեալ չինեաց զեկեղեցի 'ի հարաւակողմն Ս. Յակոբայ կից նմին, յորում է մին յերից դրանց եկեղեցւոյն՝ անաղարտ պահեալ զհնութիւն նորին, և կոչեաց զայն Էջմիածին, 'ի յիշատակ իջման 'որդւոյն Աստուծոյ 'ի վերափոխումն մօրն և Կուսի։ Եւ կազմել զաթոռ Հայրապետական փառաւոր և գմբեթարդ, եւ Մելիտոն ոմն ճարտարագործ յօրինեալ շքեղացոյց 'ի կոտորոց սատաիի